ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՄԱԾՁԲ-ԱԻՆ-23/3

ք. Երևան «07» 02 2023թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Միրզախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոպազ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բաբանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արբանյակային կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 428 000 (չորս հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել. կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 33 ա
ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ՝ 00010717
Գլխավոր քարտուղար	Տնօրեն Ս. Բաբայան
Լ. Միրզախանյան	
_____ /ստորագրություն/	_____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 07 » 02 2023թ. կնքված
ՀՄԱՇՁԲ-ԱԻՆ-23/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	64211250/3	Արբանյակային կապի ծառայություններ	դրամ	300000	1	Ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում
2	64211250/4	Արբանյակային կապի ծառայություններ	դրամ	100000	1	Ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում
3	64211250/5	Արբանյակային կապի ծառայություններ (THURAYA արբանյակային հեռախոսաքարտ)	դրամ	28000	1	Ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար
Լ. Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«Տոպազ-95» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 33 ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ՝ 00010717
Տնօրեն՝ Ս. Բաբայան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 07 » 02 2023թ. կնքված
ՀՄԱՇՁԲ-ԱԻՆ-23/3 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1 ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արբանյակային հեռախոսակապի ծառայությունները պետք է մատուցվեն Thuraya կանխավճարային Nova Plus հեռախոսաքարտերի համար, որոնք գործում են Thuraya օպերատորի արբանյակային ցանցում աշխատող արբանյակային հեռախոսների միջոցով: Մրցույթին հաղթող ընկերությունը պարտավոր է ապահովել հեռախոսաքարտերի միացումը գործող արբանյակային ցանցում աշխատող հեռախոսներին: Մրցույթին հաղթող ընկերությունը պարտավոր է տրամադրել կապի ծառայությունները մինչև գործող կապի ծառայությունների դադարման ժամկետը:
Օգտագործման պայմաններ
• Վճարման միավորները.
o Ձայնային զանգերը հիմնված են 60 վայրկյան չափման միավորի վրա
o 1 SMS-ի վճարը ներառում է 160 - սիմվոլ.
o ThurayaGmPRS գանձվում է՝ հիմնվելով 100 կիլոբայթ տվյալների փոխանցման վրա.
• Լրացուցիչ ծառայություններ.
2 Զանգի վերահասցեավորում / Զանգի սպասում և պահում / Միաժամանակյա զանգ մի քանի բաժանորդի հետ / Զանգի գծի հայտնաբերում / Ձայնային փոստ / Հաճախորդի կողմից վերահսկվող զանգի արգելափակում.
• Ռոումինգ GSM ցանցում.
GSM ցանց զանգ կատարելը կամ այդ ցանցից զանգ ընդունելը միայն թույլատրվում է կոնկրետ GSM օպերատորների կողմից:
• Հաշվի ակտիվ ժամկետը.
Հաշվի ակտիվ ժամկետը 1 տարի է՝ հաշված առաջին զանգից: SIM քարտը կդադարի ակտիվ լինելուց, եթե առաջին զանգը չի կատարվել քարտի ակտիվացիայից հետո 1 տարվա ընթացքում:
• Երկարաձգման վճար.
Երկարաձգման վճարը՝ 39 unit ավտոմատ կերպով գանձվում է բաժանորդի հաշվից, եթե հաշվի վրա կան բավարար միջոցներ:
• Արտոնյալ ժամանակահատված.
Բաժանորդին տրվում է 90 օր արտոնյալ ժամանակահատված՝ SIM քարտի ակտիվ ժամկետի սպառումից հետո՝այդ ժամկետը երկարաձգելու համար: Արտոնյալ ժամանակահատվածում մուտքային զանգերը ընդունումը հնարավոր է: Եթե բաժանորդը չի երկարաձգում քարտի ակտիվ ժամկետը այդ 90 օրվա ընթացքում, հաշիվը ապաակտիվանում է անմիջապես:

Չափաբաժին 2 ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արբանյակային ինտերնետ ծառայությունը պետք է մատուցվի Thuraya քարտի համար, որը գործում է Thuraya օպերատորի արբանյակային ցանցում աշխատող արբանյակային տերմինալի միջոցով: Մրցույթին հաղթող ընկերությունը պարտավոր է ապահովել արբանյակային ինտերնետի միացումը արբանյակային ցանցում աշխատող տերմինալին: Մրցույթին հաղթող ընկերությունը պարտավոր է տրամադրել արբանյակային ինտերնետային ծառայությունը մինչև գործող կապի ծառայությունների դադարման ժամկետը:
Օգտագործման պայմաններ

Տվյալների փոխանցման ժամանակ ստանդարտ IP տեխնոլոգիան օգտագործելիս հաշվի է առնվում փոխանցված և ստացված տվյալների քանակը:

o Բաժանորդային վճարում ներառված ծավալը գերազանցող Մեկ ՄԲ-ի վճարը համարժեք է 3280 ՀՀ դրամին:

o Հանրային IP հասցեի տրամադրում, ամսական վճար համարժեք է 32000 ՀՀ դրամին:

o Ստատիկ IP հասցեի տրամադրում, ամսական վճար համարժեք է 32000 ՀՀ դրամին:

o Լրացուցիչ ծառայություններ.

Սակագնային պլանների փոփոխման կանոններ.

- Սակագնային պլաններից անցումը սպառված տրաֆիկի քանակի ավելացմանն իրականացվում է առանց լրացուցիչ միջոցներ գանձելու.
- Սպառված տրաֆիկի քանակի կրճատման ուղղությամբ սակագնային պլաններից անցնելիս գանձվում է 25 000 ՀՀ դրամին համարժեք միանվագ վճար:

Պատվիրատու	**Կատարող**
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 33 ա
ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 00010717
Գլխավոր քարտուղար	Տնօրեն Ա. Բարսեղյան
Լ. Միրզախանյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«08» 02 2023թ. կնքված
ՀՄԱՇՁԲ-ԱԻՆ-23/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211250/1	Արբանյակային կապի ծառայություններ	-	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000
2	64211250/2	Արբանյակային կապի ծառայություններ	-	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000
3	64211250/1	Արբանյակային կապի ծառայություններ (THURAYA արբանյակային հեռախոսաբարտ)	-	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար
Լ. Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Կատարող

«Տոպազ-95» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 33 ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ՝ 00010717
Տնօրեն՝ Ս. Բաբանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 03 » 02 2023թ. կնքված
ՀՄԱՇՁԲ-ԱԻՆ-23/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2023թ. կնքված
ՀՄԱԾՁԲ-ԱԻՆ-23/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն